## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**«ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ԵՎ ՅՈՒԼԻԱՆԱ ԳԱԳԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ՄԻՋԵՎ 10.03.2025թ. ԿՆՔՎԱԾ N «ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-26/16»-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «27» ապրիլ 2026թ.

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Գևորգ Սիմոնյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Յուլիանա Գագիկի Մելքումյանը (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 2026 թվականի մարտի 10-ին կնքված N «ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-26/16»-2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.6 կետը և պատասխանատու ստորաբաժանման 2026 թվականի ապրիլի 15-ի գրավոր առաջարկությունը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի Հավելված N 1-ը («Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց») շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ի: Պայմանագրի վերջնաժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով՝ սահմանելով մինչև 30.05.2026թ.-ը:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821
ՀՎՀՀ 02509478

Տնօրեն-------------------------Գևորգ Սիմոնյան
(ստորագրություն) Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Յուլիանա Գագիկի Մելքումյան
ք.Երևան, Հանրապետության 60, բն. 88
Նույն. քարտ՝ 018961748, տրված 12.11.2025թ., 011-ի կողմից
ՀԾՀ 5807760328
Բանկ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163005769670

---------------------
(ստորագրություն)

*Հավելված N 1*
*«27» [illegible] 2026թ. կնքված N1 համաձայնագրի*
*Հավելված թիվ 1*
*« 10 » մարտի 2026թ. կնքված*
*«ԻԿՎԾԻԿ-ԳՀԾՁԲ-26/16»-2 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 2 | 92311180/2 | **Տեխնիկական բնութագիրը ներկայացված է ստորև (Տեխնիկական առաջադրանք 2)** | Դրամ | 500 000 | 1 | ք. Երևան, Մովսես Խորենացի 162 Ա | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.05.2026թ. |

**Տեխնիկական առաջադրանք 2**
**Մասնագետ՝ սոցիալական ոլորտի մասնագետի**

**Տևողությունը՝** մինչև 1 ամիս

**Ծրագրի անվանումը՝** «Արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող Երեխաների խորհրդի հարթակի ընդլայնում և ինստիտուցիոնալ զարգացում, օրենքին առնչվող երեխաների համար ծառայությունների մատուցում և ավելի լավ միջավայրի ապահովում, Երեխաների հետ աշխատող մասնագետների գիտելիքների տրամադրում, կարողությունների և հմտությունների զարգացման ապահովում, Բարնահուս մոդելի ինստիտուցիոնալ զարգացում և երեխաների շրջանում պաշտպանությանն ուղղված իրազեկում»:

**1. Ընդհանուր տեղեկություններ Ծրագրի մասին**

Ծրագիրն իրականացվում է Հայաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի) ներկայացուցչության և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության շրջանակում՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:
Ծրագիրն ապահովելու է Անչափահասների արդարադատության խորհրդի ընդլայնմանն ու կայուն գործարկմանը, արդարադատությանն առնչվող երեխաների հետ աշխատող մասնագետների երեխայակենտրոն վերաբերմունքի և մոտեցումների ուսուցում, կարողությունների և հմտությունների զարգացման ապահովում, Բարնահուս մոդելի ինստիտուցիոնալ զարգացում, երեխաների և ուսուցիչների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված՝ իրազեկման դասընթացների կազմակերպում»:

**2. Աշխատանքային գործունեության շրջանակները**

Մշակել մեթոդական ուղեցույց երեխաների մասնակցությամբ իրականացվող քննչական վարույթների Բարնահուս կենտրոնների համար՝ նախատեսված քննիչների, դատախազների, փաստաբանների, ինչպես նաև կենտրոնի որակավորված հոգեբանների և սոցիալական աշխատողների համար: Նպաստել երեխաների լավագույն շահի պաշտպանությանը քննչական վարույթների ընթացքում՝ սոցիալական աջակցության, պաշտպանության և համակարգված միջամտության մեխանիզմների հստակեցման միջոցով:

**3. Իրականացման վայրը՝** Հայաստան, Երևան և ՀՀ մարզեր:

**4. Գործողությունները և ակնկալվող արդյունքները**

| Գործողություններ | Արդյունքներ |
|---|---|

| | |
|---|---|
| Կատարել Բարնահուս մոդելի շրջանակում երեխաների մասնակցությամբ իրականացվող քննչական վարույթներում կիրառվող սոցիալական աջակցության միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն: | Միջազգային փորձի ուսումնասիրություն: |
| Մասնակցել ուղեցույցի մշակմանը՝ ապահովելով համապատասխանությունը երեխայի իրավունքների և երեխայակենտրոն արդարադատության սկզբունքներին, միջազգային չափորոշիչներին, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը՝ ուղղված երեխայի մասնակցությամբ քննչական վարույթների ընթացքում սոցիալական աջակցության և պաշտպանությանը: | Ուղեցույց՝ մշակված սոցիալական բաղադրիչով՝ կանխարգելման և վերականգնման ուղղություններով: |
| Ուսումնասիրել բազմամասնագիտական կենտրոնի՝ մոդելի միջազգային և տեղական լավագույն փորձը սոցիալական աշխատանքի համատեքստում: | Միջազգային փորձի ուսումնասիրություն: |
| Մշակել մեթոդական մոտեցումներ երեխայի սոցիալական կարիքների գնահատման, աջակցման և ուղղորդման համար քննչական վարույթի բոլոր փուլերում: | Մեթոդական մոտեցումներ երեխայի սոցիալական կարիքների գնահատման, աջակցման և ուղղորդման համար՝ քննչական վարույթի բոլոր փուլերում: |
| Սահմանել սոցիալական աշխատողի գործողությունների ընթացակարգը՝ երեխայի նույնականումից մինչև վարույթի ավարտ և հետվերականգնողական փուլ, բազմամասնագիտական կենտրոնի՝ Բարնահուս մոդելի շրջանակում սոցիալական աշխատողի դերերն ու գործառույթները: | Սոցիալական աշխատողի գործողությունների ընթացակարգի սահմանում: |
| Մշակել երեխայի խոցելիության և կարիքների սոցիալական գնահատման գործիքներ և մեթոդներ՝ հաշվի առնելով տարիքային և հոգեսոցիալական առանձնահատկությունները: | Երեխայի խոցելիության և կարիքների սոցիալական գնահատման գործիքների և մեթոդների մշակում: |
| Մշակել միջգերատեսչական համագործակցության և տեղեկատվության փոխանակման մեխանիզմներ՝ ամրապնդելով միջգերատեսչական և բազմամասնագիտական համագործակցությունը | Միջգերատեսչական համագործակցության և տեղեկատվության փոխանակման մեխանիզմների հստակեցում: |
| Ներկայացնել աջակցման և վերականգնման փուլերը, գնահատել կրկնազոհացման ռիսկի գործոնները, ապահովել երեխայի կրկնազոհացման երկրորդային կանխարգելումը: | Սոցիալական վերականգնման և վերաինտեգրման փուլերի ներկայացում: |
| Նկարագրել ընտանիքի, համայնքի, կրթական հաստատությունների և այլ դերակատարների մասնակցության շրջանակը: | Ընտանիքի, համայնքի, կրթական հաստատությունների և այլ դերակատարների մասնակցության հիմնավորում: |
| Մասնակցել ուղեցույցի փորձագիտական գնահատմանը, խմբագրմանը և վերջնականացմանը: | Ուղեցույցի ամբողջական ներկայացում սոցիալական բաղադրիչ՝ կանխարգելման և երականգնման ուղղություններով, թիրախ խմբի սոցիալական կարիքներին համապատասխան բովանդակություն: |
| Ներկայացնել հաշվետվություն պատվիրատուի կողմից սահմանված ձևաչափով և ժամկետներում կատարված աշխատանքների վերաբերյալ: | Հաշվետվության ներկայացում |

5. **Պահանջվող որակավորում, փորձ և կարողություններ**

**Կրթություն**

- Բարձրագույն կրթություն սոցիալական աշխատանքի, սոցիոլոգիայի, հանրային քաղաքականության կամ հարակից ոլորտում

**Մասնագիտական փորձ**

- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ սոցիալական աշխատանքի, երիտասարդների կամ խոցելի խմբերի հետ աշխատանքի ոլորտում
- Փորձ անչափահասների և/կամ երիտասարդների հետ աշխատանքի ոլորտում
- Գիտելիքներ վարքագծային փոփոխության և խորհրդատվական մոտեցումների վերաբերյալ
- Տրավմայի, բռնության կամ երեխայի պաշտպանության ոլորտում փորձ (նախընտրելի)
- Գիտելիքներ սոցիալական ծառայությունների համակարգի և միջոլորտային համագործակցության վերաբերյալ

**Կարողություններ և մասնագիտական հմտություններ**

- Սոցիալական վերլուծության և կարիքների գնահատման կարողություն
- Գործնական ուղեցույցների մշակման փորձ
- Թիմային և միջոլորտային համագործակցության հմտություններ
- Հաղորդակցման և հաշվետվությունների պատրաստման կարողություն
- Կոնֆիդենցիալության և էթիկական նորմերի պահպանում
- Վերլուծություններ և հաշվետվություններ կազմելու և ներկայացնելու հմտություններ,
- Թիմի կազմում աշխատելու, ինչպես նաև թիմը կառավարելու կարողություն,
- Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ (MS Word, Excel, PowerPoint; web applications):

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821
ՀՎՀՀ 02509478

Տնօրեն--------------------------Գևորգ Սիմոնյան
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

Յուլիանա Գագիկի Մելքումյան
ք.Երևան, Հանրապետության 60, բն. 88
Նույն. քարտ՝ 018961748, տրված 12.11.2025թ., 011-ի կողմից
ՀԾՀ 5807760328
Բանկ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163005769670

------------------------
(ստորագրություն)